

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին՝ 40 ՄԶ՝
• Գումարաց • 21 խրա
Վեցամս. • Կ. Պոլսոյ • 3 ՄԶ՝
• Գաւառաց • 11 խրա
Ստար երկիրներու • 50 Յր.
Ծանուցման տողը մէկ անգամի հաւ.
մար 3 զուրուշ, երկու անգամի հաւ.
մար 2 զրշ է. աւելի անգամներու
համար գատ ստորագրութիւն կըլ-
այ :
Իւրաքանչիւր թիւ 40 փարա արծ :



ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱՉՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Գուրս գնացած լրագրաց ճանրու-
ծ ախրը Խմբագրութեան վրայ է :
Լրագրոյն վերաբերեալ նախակի
կամ որ և ինչ գրութիւն Խմբագիր
— Տնօրէնին պիտի ուղարկուի, զայս
թիւ Ստանդարտը չհասնակի թիւ
198, Նօրո խան, Մասիսի գրասեն-
եակը :
Ճանրու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :
Չտպուած նամակ, յոդուած, եւ
ետ չեն արուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԱԾԱԴԱՐԱՆ 22 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Պիղմարը իշխանը վիճենա այցե-
լութիւն ըրաւ և վերադարձաւ, բայց
տակաւին այս առթիւ լրագրաց խոր-
հըրդածութիւնները վերջ չդրան :
Քանի մը ժամանակէ ՚ի վեր Ռուսա-
կան և Գերմանական լրագրաց վիճա-
բանութիւններն հասարակաց ուղղ-
րութիւնը գրաւած էին, և կըսուէր
թէ՝ երկու տէրութեանց միջև ծանր
անհամաձայնութիւն կայ, Հաղիւ թէ
երկու կայսերայ Սէյքսանդրովի ան-
սակցութիւնն այս ամիս փարաւեց,
բայց ահա նորէն առաւել սաստկու-
թեամբ ՚ի վեր ելան երկու տէրու-
թեանց տարաձայնութեան զրոյցնե-
րն, որք դրեթէ հաստատութիւն դը-
տան Պիղմարը իշխանին և կոմս Մետ-
րաչիի տեսակցութեամբ : Արդարեւ
երկու նախարարաց միջև եղած խո-
սակցութիւնները ճշիւ զիտնալ ան-
կարելի է. սակայն Ստորաշի կոմսին
բերանն համարուած թերթեր կը
յայտարարեն թէ երկու տէրութեանց
չաճն աշխարհ միացեալ է որ իրենց
միջև զբաւոր դաշինք իսկ հաստա-
տելու հարկ չկայ : Բայց ի՞նչ է այս
համաձայնութեան նպատակն. — ա-
մենէն արժանահաւատ կարծեաց նա-
յելով Պիղմարը իշխանը Գերմանիոյ
աղբային այն զգացումը դործադրել
կուզէ, որով Ստորաշի պետք է Ա-
րեւելից մէջ Գերմանական քաղաքա-
կըթութեան ու աղբայնութեան յա-
ւաքագահը լինի : Ասոր համար էր
որ Պէրլինի գաշնադիրը Հէրսէքն և
Պոսնիան Ստորիոյ յանձնեց, ՚ի վը-
տանդ Ռուսիոյ ծանրապէս դժկամու-
կութեան, որ Պիղմարը և Կորչաքով
իշխանաց միջև անհամաձայնութեան
պատճառ եղած է : Թէպէտ և Ռու-
սիոյ կէս պաշտօնական թերթն հեր-
քեց Գաղղիական Սօլէյլ լրագրին հը-
րատարակած կորչաքով իշխանին խո-
սակցութիւնը, սակայն հիւսիսային
Գերմանիոյ կաղէթին իւր թշնամութիւն-
ը կը հաշակէ Ռուսիոյ դէմ : Ծանու-
ցանքով որ եթէ Համապատկութիւնն
իւր սիրելի երազն իրացնելու ելնէ,
զԱւստրիա և զԳերմանիա միացեալ
պիտի դանէ իրեն դէմ : Ո՞վ է այս
Համապատկութիւնն. — անշուշտ այս
բառն առաձգական է և կրնայ ուղ-
ղակի Ռուսիոյ դէմ համարուի կամ
ոչ, Ռուսական թերթեր կըսեն թէ
Համապատկութիւնը Աւստրիոյ մէջ են :
Այսու ամենայնիւ, Համապատկութեան
բառով հասարակութիւնն զՌուսիա
հասկնալու վարժուած է : Կարելի է որ
Բեդրսպուրիի արքունիքը կամ նա-
խարարութիւնն իրենք զիրենք Հա-
մապատկութեան չհամարելով, այն խօսքն
իրենց վրայ չտանուեն : Աղէքսանդր
Բ. կայսրը վերջին պատերազմն հը-

ԲԱՐԵՆՈՐՈՐԴՄՈՒՆՔ

Մայրաքաղաքիս Գաղղիական ըմ-
թամկու լրագիրն իւր հինգ շտաբի
աւուր թուոյն մէջ հետեւեալ կարե-
ւոր յօդուածը կը հրատարակէ Հայ-
կական խնդրոյն վրայ :
« Հայաստանի մէջ անցած դէպ-
քերու վրայ խօսելէ ձեռնպահ եղած
էինք բաւական երկար ժամանակէ ՚ի
վեր :
Այս մասին մեր պահած լու-
թիւնը սա պատճառաւ էր թէ Ասիոյ
այն մասին ժողովրդաց և մանաւանդ
Հայ ժողովրդեան, որ ամենէն բազ-
մաթիւ և ամենէն թշուառն է, վը-
ճակին բարեւոքման համար բարենա-
նորդութիւնը դործադրելու պաշտո-
նով Բարիսէրները զրկուած էին :
Այդ Բարիսէրներուն մեկնած ժա-
մանակ քանի մ'անգամ դիտողու-
թիւն ըրինք թէ իրենց պաշտօնը բազ-
մացեալ արդիւնքներն յառաջ բերել
կարենալու համար պէտք եղած պայ-
մանաց մէջ չէին դառնուէր Բարիսէրը :
Մասնաւորապէս պիղբայինք այս
իրողութեան վրայ թէ Հայոց Պատրի-
արքարանին կարծիքը պէտք էր հար-
ցուէր Այդ կողմէն դալիք տեղեկու-
թիւնը, դաւառաց մէջ պէտք եղած
տեղերը ձեռք առնուելիք միջոցնե-
րու հիմունքը գնելու կրնային օգնել :
Ըստ մեզ հարկաւոր էր Պատրի-
արքարանին հետ համաձայնիլ, որ
այս մասին ամենաճիշդ և ամենա-
կատարեալ տեղեկութիւններ կրնար
տալ, և որ բոլոր Հայաստանի մէջ
անդորրութեան հաստատութիւնը տես-
նելու մասին գոնէ նոյն իսկ կառա-
վարութեան չափ չաճ ունէր :
Ռուսի Բարիսէրը մեկնեցան ձեռք
առնելու միջոցներուն հիմունքն առա-
ջուց չորոշուած :
Անգամ մ'իշխեց պաշտօնատեղին
հասնելէ ետեւ, Բարիսէրը բաւական
առաջանքի կուլ մ'ընել թուեցան քա-
նի մը բարենորոգման հաստատու-
թեան, կամ աւելի ճիշդ խօսելով,
քանի մը յանցաւորաց պատժուելուն
համար :
Վերջերս շատ կարեւորութիւն տըր-
ւեցաւ, մանաւանդ թուրքական
մամլոյն մէջ, Բարիսէրը Ապետին պէ-
յի ձեռք առած մէկ միջոցին, որ 23
Բիւրտ դուլաներ, որք առաջին
հարկէն չէն այրած կամ կողոպտած
են կըսէր դատաւարութիւնը պատ-
ճառաբանող տեղեկագիրն, Այսպ-
նիս աքսորելու մէջ կը կայանար :
Թէ և այդ անգամ ալ լուսթիւն
պաշտօնը, այսու ամենայնիւ մեր միտ-
քէն չկրնային սա դիտողութիւնը չը-
նել թէ հարկէն աւելի դիւղ կողոպ-
տած կամ այրած լինելու համար յան-
ցաւոր ճանչուած մարդիկ ստուգիլ բա-
ղամբունաբարութիւններ և սպանու-
թիւնները դործած և դործել տուած
են : Այդ, եթէ այս սփրդ պրծները

մի միայն Օսմանեան հողի վրայ աքսորի
դատաւարութեամբ են, ի՞նչ պատիժ
կրել պիտի տան ուրեմն այնպիսի ան-
ձանց, որք քիչ մէկ կամ երկու հո-
գի սպանուած են :
Ռուսի մեզ այնպէս կը թուի թէ
Ապետին պէյին յուցած կարծեցեալ
աղբայնութիւնն ու շտաբութեան կամ
գաղթաւոր արժանի բան մը չունի :
Գիտեմք որ օմանք կըսեն թէ
Գիւրգերուն քով վերջերս ծագած
և տակաւին ծագող ապստամբական
շարժումները 23 դուլաներուն աք-
սորման հետեւանքն եղան և են :
Այս բանն հարկ է, և միայն կա-
պացուցանէ թէ Բարիսէրը խիստ թոյլ
կերպիւ դործած է :
Քանի որ իշխող դուլաներն այդ-
պիսի ոճիրներով յանցաւոր ճանչը-
ւած էին, կայսերական Բարիսէրին
պարտքն էր իւր հարկ տեսած դին-
ւարական դրութիւնը խնդրել կա-
ռավարութեանէն, և անոնց ոճիրներուն
իրապէս արժան եղած պատիժը տալ :
Այն պատիժներն առանց փորան-
ման դործադրուիլ պէտք էին, և այն
ժամանակ յանցաւորաց մեղաւորիչնե-
րն ու արանեակները վրկարար սոս-
կում մը կ'ըլլային :
Բայց միայն արտօման պատիժն,
որ յայտնի է թէ քիչ ժամանակէն
կրնայ ներուիլ, Գիւրգերուն քով ա-
մեն վտիտ ազատ դժգոհութիւն մը
կրնար պատճառել :
Ռուսի մեզ Ապետին պէյին ձեռք
առածին նման միջոցներ՝ Գիւրգերը
կը դժգոհացնեն՝ առանց դոճացում
տալու Հայոց :
Ռուսի, ի՞նչ տեսնը անկէ ի վեր
Գրեթէ բոլոր Հայաստանի մէջ,
բուն Գիւրգատանայ մէջ և մինչև իսկ
այն ամենէն վտանգաւոր թափառիկ
ցեղերու մէջ, որք Միջագետաց կող-
մերը կը ձմերեն, աւելի կամ նուազ
ծանր ապստամբական փորձեր, որք
սակայն լաւ կը ցուցնեն անոնց ընդ-
հանուր ձգտումը :
Գիւրգերը կառավարութեան ըսել
կը թուին թէ. « Գուր Հայերը մեր
հարստահարութիւններէն աղատել
կը թուի. լաւ. մեք թէ Հայերն և
թէ՝ դձեղ պիտի ներգեմք : »
Եւ բնականաբար այս ապստամբու-
թիւններէն և ոյս վրէժխնդրութիւն-
ներէն ամենէն աւելի վնասուողներն
Հայք են :
Թուրք լրագիր մը փրջին օրերս
կըսէր թէ Մալիսպըրի մարքիդը բարե-
նորոգմանց արդիւնքին նկատմամբ
ապահով է :
Մեք պէտք է ենթադրեմք որ ե-
թէ ազնիւ Լորան այսպէս կը խորհի,
դրական տեղեկութեանց վրայ կը
յիշու, բայց միանգամայն համոզ-
ւած եմք որ կէս միջոցներու կուստ-
կից պէտք չէ լինի :
Անգ վրայ արտաքին գործոց նախա-

